# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 ԱՊՐԻԼԻ 2021 թվականի N 118-Ա

### ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 35-րդ գլխի դրույթներով և հիմք ընդունելով Ալավերդի համայնքի ավագանու 30.07.2020թ. N 64-Ն, համայնքի ղեկավարի 09.09.2020թ. N 282-Ա որոշումները, հողամասի մրցույթով վարձակալության հանձնելու արդյունքների մասին 30.03.2021թ. N 1 արձանագրությունը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը **որոշում եմ**

1. Ալավերդու համայնքային սեփականությունը համարվող՝ Ալավերդի համայնքի Հաղպատ գյուղում գտնվող (ծածկագիր՝ 06-060-0232-0032), 0.36105 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության խոտհարքը (սեփականության իրավունքի վկայական N 14072020-06-0017), վարձակալության իրավունքով, 25 տարի ժամկետով, տարեկան 44000 (քառասունչորս հազար) դրամ վարձավճարով (նոր վարձավճար սահմանելու դեպքում վարձավճարի չափը ենթակա է փոփոխման) տրամադրել մրցույթի հաղթող Գարեգին Ֆրունզեի Իսրայելյանին:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում վարձակալության պայմանագիր կնքելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ

2021թ. ապրիլի 01
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 ԱՊՐԻԼԻ 2021 թվականի N 119-Ա

### ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ, ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ՀՈՂԱՄԱՍ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ, 68-րդ, 70-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության մասին օրենքի 6-րդ հոդվածով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 24.09.2020թ. N 68-Ն, համայնքի ղեկավարի 24.03.2021թ. N 107-Ա որոշումները, աճուրդային հանձնաժողովի 30.03.2021թ. արձանագրությունը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի Երևանյան խճուղի, N 33/1 հասցեում գտնվող, 0.00208 հա մակերեսով հողամասը (ծածկագիր՝ 06-002-0629-0074), 68640 (վաթսունութ հազար վեց հարյուր քառասուն) դրամ արժեքով վաճառել աճուրդի հաղթող Արմենակ Ալբերտի Մոսինյանին՝ հասարակական կառուցապատման համար:
2. Աճուրդի հաղթողին տրամադրել կառուցապատման ճարտարապետահատա-կագծային առաջադրանք: Հողամասի նկատմամբ սահմանափակումներ չկան և ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում առք ու վաճառքի պայմանագիրը կնքելու պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2021թ. ապրիլի 01
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 ԱՊՐԻԼԻ 2021 թվականի N 120-Ա

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՌԵՎՏՐԻ ՍՐԱՀԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 34-րդ, 35-րդ կետերով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 17.03.2021թ. N 102-Ա որոշումը, սեփականության իրավունքի N 29032021-06-0049 վկայականը, վճարման անդորրագրերը և հաշվի առնելով, որ Արթուր Սերյոժայի Նասիբյանն ընդունել է առևտրի սրահը և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու գնման նախապատվության առաջարկությունը, վճարել է օրինականացման համար սահմանված վճարները, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Դեբեդ թաղամաս, N 18-25/5 հասցեում գտնվող, համայնքի ղեկավարի 17.03.2021թ. N 102-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 16.8 քմ արտաքին մակերեսով (13.7 քմ ներքին մակերեսով) առևտրի սրահը՝ 166320 (հարյուր վաթսունվեց հազար երեք հարյուր քսան) դրամ արժեքով և սպասարկման համար զբաղեցրած 0.00168 հա մակերեսով հողամասը՝ 13608 (տասներեք հազար վեց հարյուր ութ) դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքով, օտարել Արթուր Սերյոժայի Նասիբյանին:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում առևտրի սրահի և զբաղեցրած հողամասի առք ու վաճառքի պայմանագիր կնքելու պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2021թ. ապրիլի 01
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 ԱՊՐԻԼԻ 2021 թվականի N 121-Ա

### ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, հիմք ընդունելով Տիգրան Խաչատրյանի դիմումը, անձնագրերի պատճենները, սեփականության իրավունքի N 31032021-06-0031 վկայականի պատճենը, Աքորի գյուղի վարչական ղեկավարի կողմից 01.04.2021թ. տրված N 266 տեղեկանքը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

Ալավերդի համայնքի Աքորի գյուղում գտնվող Օնան Սարգսի Խաչատրյանին, Ջուլիետա Սարգսի Խաչատրյանին, Տիգրան Օնանի Խաչատրյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող բնակելի տանը տրամադրել համայնք Ալավերդի, գյուղ Աքորի, փողոց 4, N 10 փոստային հասցե:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2021թ. ապրիլի 01

ք. Ալավերդի